ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ և ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՅՏ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ– ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

հուլիսի 28, 2016թ.
Հայաստան

Առաջադրանքի անվանումը՝ Էներգետիկայի Շաբաթ-ի կազմակերպում

Հղումը No.: R2E2 -03/2016

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը այժմ հրավիրում է խորհրդատվական ընկերություններին (խորհրդատուներ) ներկայացնելու իրենց հետաքրքրությունը ծառայությունների մատուցման համար: Խորհրդատվական ծառայությունները ("Ծառայություններ") ներառում են՝ **Էներգետիկայի Շաբաթ-ի կազմակերպում:**

Աշխատանքների շրջանակը
Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը կազմակերպում է Էներգետիկայի Շաբաթ միջոցառումների շարքը:

Միջոցառման ընթացքում նախատեսվում է կազմակերպել ելույթներ, կլոր սեղաններ, ուսուցողական և տեղեկատվական սեմինարներ, այցելություն տեղանքներ:

2. Աշխատանքի հիմնական նպատակը

«Էներգետիկայի Շաբաթ» միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

1. Հրապարակել էներգետիկայի Շաբաթի կազմակերպման և իրականացման վերաբերյալ հայտարարություն:
2. Վարձակալել հիմնական միջոցառումների անցկացման համար տարածք, որտեղ հնարավոր կլինի կազմակերպել սեմինարներ /տևողությունը՝ 3 օր/ և այլ հանդիպումներ:
3. «Էներգետիկայի Շաբաթ» միջոցառման անցկացման համար հիմնական շենքում ստեղծել մշտական տեղեկատվական հնարավորություն:
4. Ցուցահանդեսի կազմակերպում /տևողությունը՝ 3 օր/:
5. Պատրաստել միջոցառմանը նվիրված տեղեկատվական տպագիր նյութեր:
6. Պատրաստել միջոցառման ավարտից հետո ամփոփիչ էլեկտրոնային նյութեր:
7. Պատրաստել ֆոտո և տեսառեպորտաժներ:
8. Իրականացնել Էներգետիկայի Շաբաթի լուսաբանում հանրապետական հեռուստատեսության և ռադիոյի եթերում:
9. Ապահովել մասնակիցներին սուրճի և ճաշի մատուցում:
10. Բանավոր սինխրոն թարգմանություն հայերեն-անգլերեն և հակառակը և այլն:

Խորհրդատվական ծառայությունների տևողությունը՝ 3 ամիս:

Հետաքրքրված խորհրդատուները պետք է տեղեկություններ տրամադրեն այն մասին, որ նրանք ունեն անհրաժեշտ որակավորում և համապատասխան փորձ ծառայությունների մատուցման համար: Ընտրության չափանիշներն են՝

Խորհրդատվական ընկերության ընդհանուր փորձառությունը նմանատիպ միջոցառումների կազմակերպման ասպարեզում– 50 միավոր

Խորհրդատվական ընկերության հատուկ փորձառությունը էներգետիկայի/էներգախնայողության ոլորտի նմանատիպ միջոցառումների կազմակերպման ասպարեզում - 50 միավոր

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկության կամ ենթախորհրդատվական ձևով՝ բարձրացնելու իրենց որակավորումը:

Լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեով տեղական ժամանակով ժամը 9:00-18:00.

Հետաքրքրությունների հայտը պետք է հանձնել գրավոր կամ էլեկտրոնային ձևով ստորև նշված հասցեով մինչև **2016թ, օգոստոսի 9-ը,** 17:00 տեղական ժամանակով:

Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ
Տնօրեն՝ Թամարա Բաբայան
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պռոշյան 1-ին նրբանցք, 32 տուն;
Հեռախոս / Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 -11; e-mail: g.zara@r2e2.am
Վեբ կայք՝ www.r2e2.am